ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը <<ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/21>>

<<ՀՀՌՑ>> ՓԲԸ կարիքների համար համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/21>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի հունիսի 14-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի հունիսի 17 և 18-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարգելի Մասնակից,

Ի պատասխան ձեր 16.06.2019թ. հարցադրումների հայտնում ենք հետևյալը.

Հարցադրում N 1

Հարգելի գործընկեր, ԳԲԽ-ԱՄ 2018/80 բողոքի վերաբերյալ Հայաստանի հանրապետության գնումների հետ կապված բողոքների քննող անձի ս. թ. օգոստոսի 28-ի որոշմամբ արտադրողի կողմից տրամադրվող MAF-ի ներկայացման պարտադիր պահանջը որակվել է որպես "Գնումների մասին" ՀՀ օրենքի սկզբունքների անհամապատասխան: Ուստի պետք է ենթադրել, որ ցանկացած այլ մրցույթով գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրերով սահմանված MAF-ի ներկայացման պահանջը օրենքին անհամապատասխան է: Խնդրում ենք վերոգրյալի հետ կապված տալ պարզաբանում:

Պարզաբանում N 1

Գնման առարկայի բնութագրում որպես լրացուցիչ պայման նշված է, որ մատակարարը պետք է ունենա արտադրողի կողմից տրված հավաստագրման ձև MAF (Manufacturer's Authorization Form).
Նշված պահանջը չի սահմանափակում մասնակիցների շրջանակը, քանի որ ապրանքի անվանումը սահմանված է APC SYBT-4 կամ համարժեք, իսկ, օրինակի համար, նույն APC ընկերությունը, ըստ https://www.apc.com/am/en/how-to-buy/apc-distributors.jsp պաշտոնական կայքէջի տվյալների, Հայաստանի Հանրապետությունում ունի մեկից ավել պաշտոնական դիստրիբյուտոր: Նույնը կարելի է ենթադրել նաև համարժեք ապրանք արտադրողների պարագայում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Մ. Նիկոլյանին**:

Հեռախոս՝ *(+374 10) 65 40 73*
Էլեկտրոնային փոստ՝ *hhrc.gnumner@tna.am, hhrc.gnum@tna.am*